



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան Ա. Դավթի 87Ա

« 06 » ապրիլ 2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 040868/2

**ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԱՐԳԵԼԱՆՔԻ ԵՆԹԱԿԱ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ
ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ ՊԵԿ ԻՎ հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման
ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Խաչատրյանս

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 04.02.2022թ-ի թիվ ԱԿ
040868 հանձնարարագրի, ուսումնասիրելով 26.01.2022թ-ի թիվ 152-Ա վարչական վարույթի
և հարկ վճարողի վերաբերյալ նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

«Թամարա Վռամի Սարգսյան» Ֆ/Ա-ի (ՀԾՀ՝ 6210560458, անձնագիր՝ AN0292291,
ՀՎՀՀ՝ 40055357, հասցե՝ ք. Երևան, Մյասնիկյան պողոտա, 4-5) վերաբերյալ ՀՀ ՊԵԿ
իրավաբանական վարչության պետի կողմից 26.01.2022թ-ին կայացվել է թիվ 152-Ա որոշումը
6.046.000 դրամ գանձելու վերաբերյալ: 26.01.2022թ-ի թիվ 152-Ա որոշման շրջանակներում
չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 6.046.000 դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի «Թամարա
Վռամի Սարգսյան» Ֆ/Ա-ի բանկային հաշիվներում դրամական միջոցների
անբավարարության և դրամարկղում առկա կանխիկ դրամի բացակայության հետևանքով
անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ հարկային օրենսգրքի 431-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով
և արգելանք կիրառել արգելանքի ենթակա այլ գույքի վրա: Վերոգրյալի հիման վրա,
ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 429-րդ, 430-րդ և 431-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արգելանք դնել հարկ վճարող «Թամարա Վռամի Սարգսյան» Ֆ/Ա-ին /ՀՎՀՀ՝
40055357/ պատկանող արգելադրման ենթակա այլ գույքի վրա **6.046.000 դրամի** չափով:

Նրան արգելել արգելադրված գույքը օգտագործել և /կամ/ տնօրինել և /կամ/ տիրապետել:
Որոշման պատճենը ոչ ուշ, քան այն ընդունելու հաջորդ օրը, պատշաճ ձևով ուղարկել:

1. ՀՀ ոստիկանության <Ճանապարհային ոստիկանություն> ծառայություն
2. ՀՀ ԱԳԿ ՊԿ
3. ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչություն
4. «Թամարա Վռամի Սարգսյան» Ֆ/Ա-ին:

Արգելանք դնելու մասին որոշումը պարտադիր է բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց համար և ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ հարկային օրենսգրքի 432-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում, ինչպես նաև արտադատական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

Սույն որոշումը ստանալու պահից Դուք նախազգուշացված եք արգելադրված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Ա.Խաչատրյան

/արգելանք դնող պաշտոնատար
անձի անունը, ազգանունը/



ստացա որոշման պատճենը _____

_____ Ամսաթիվ